# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

22.05.2015



Սիրելի շրջանավարտներ

Հասել է պատանեկության շրջանն ավարտելու և կյանքի նոր՝ ավելի հասուն ու նպատակային էջ բացելու փուլը: Մաղթում եմ, որ հետաքրքիր ու անակնկալներով լի այդ շրջանում հանդիպած խոչընդոտները չընկճեն ձեզ, այլ ավելի ամրացնեն ձեր կամքը, ոգին ու հավատը, իսկ անակնկալներն ու հանդիպումները լինեն հիշարժան և միայն բարի հետք թողնող: Թող, որ դպրոցական տարիների ընթացքում ամբարած գիտելիքները պետք գան հայրենիքը հզորացնելու և ամրակուռ սահմաններ գծելու գործում:

Շնորհավորում եմ ձեզ այս տոնական օրվա՝ Վերջին դասի կապակցությամբ և մաղթում կյանքի հարթ ճանապարհ ու խոստումնալից ապագա:

*Արարատի մարզպետ*

*Ռ. Աբրահամյան*